

Հեռագրության աշխատանք

**Թեմա՝ Առաջադեմ մարդկության բողոքը
հայոց մեծ եղեռնի դեմ**

Թիվ 194 հիմն. դպրոցի ուսուցչուհի՝ Ա. Կարապետյան

Ներածություն

21-րդ դարում թվում էր թե ապրում ենք քաղաքակիրթ աշխարհում, սակայն 44-օրյա պատերազմը ևս մեկ անգամ ապացուցեց այն տեսակետը, որ աշխարհն առաջնորդվում է իր սեփական շահերով: Նապոլեոն Բոնապարտի արտգործնախարար՝ Շարլ Մորիս Թալեյրանը նշում է Մշտական բարեկամներ չկան, կան շահերի բարեկամներ!:

Երբ միջազգային ասպարեզ դուրս եկավ Հայկական հարցը մեծ տերությունները այն դարձրեցին միջազգային դիվանագիտության շահարկման հարց: Երբ պետք էր սուլթանից որևէ զիջում ստանալ առաջ էին քաշում Հայկական հարցը, իսկ երբ հասնում էին իրենց ուզածին, մոռանում էին այդ մասին: Սուլթանը բավարարելով մեծ տերությունների պահանջները հայկական հարցը լուծում էր թուրքավարի՝ կազմակերպելով զանգվածային ջարդեր: Մեծ Բրիտանիան հայտարարում էր, որ եթե չկանխեն ջարդերը, ապա կդայտառակվեն ողջ աշխարհի առաջ, բայց երբ Մերձավոր Արևելքում մի ծարք հարցեր լուծվեցին ի օգուտ իրեն՝ անմիջապես մոռացան Հայկական հարցի մասին: Գերմանիան մշտապես հանդես էր գալիս սուլթանի պաշտպանությամբ: Ֆրանսիան մեծամեծ գումարներ էր դրել թուրքական բանտերում և վախենում էր այն կորցնելուց, ուստի լռում էր: ԱՄՆ-ն ընդհանրապես հրաժարվում էր արձարծել Հայկական հարցը, պատճառաբանելով, որ չի մասնակցել Բեռլինի վեհաժողովին և իր միջամտությունը ավելի կվնասի գործին: Ցարական Ռուսաստանը մտավախություն ուներ, որ արևմտահայ ազատագրական շարժումները կտարածվեն նաև Անդրկովկասում, ուստի շատ հարցերում համերաշխվում էր սուլթանի հետ:

Բոլորովին այլ էր առաջադեմ մարդկության վերաբերմունքը հայերի կոտորածների հանդեպ, սակայն նրանց խոսքի ուժը շատ քիչ էր մեծ տերությունների վրա ազդելու համար:



Հայտնի մարդիկ՝ հայերի մասին



Ես գիտեմ Հայաստանի ու Հայոց ցեղասպանության մասին: Գիտեմ, որ նրանք շատ բարդ պատմություն են ունեցել: Հայերը միշտ պայքարել են ու պահպանել են իրենց կրոնն ու ինքնությունը: Հայերը միշտ ներկայացրել են իրենց պատմությունն աշխարհին: Նրանք իսկապես աշխարհի ամենավեհ ազգն են: **-Մեյ Գիբսոն**

Հայերը պետք է լինեն մեր ուշադրության և ողջ աշխարհի ուշադրության կենտրոնում, որովհետև նրանք հրաշալի մշակույթ ունեն, որը ստեղծվել է անկախություն վայելող հայերի կողմից դարեր շարունակ: Նաև նրանց բացառապես հարուստ գրականությունը, որը Հայաստանի փառահեղ ներդրումն է մարդկության գանձարանում: **- Վալերի Բոյուսով**

Չոհաբերությունն է հայոց պատմության անբաժանելի մասը: Ես անհամբեր սպասում եմ այն օրվան, երբ կհամբուրեն հայոց հողը, որը տաքացել է այդքան շատ զոհերի արյունով: **- Ջոն Փոլ**

«Եթե սուրբ գրությունները ճիշտ են ընկարվել, Հայաստանն այն վայրն է, որտեղ գտնվել է դրախտը: Բայց ինչ էլ լինի նրանց ճակատագիրը, որը ցավալի է եղել գալիքի համեմատ, նրանց երկիրը միշտ պետք է լինի աշխարհի ամենահետաքրքիրներից մեկը: Հայերենը Աստծո հետ խոսելու լեզուն է»: **-Ջորջ Բայրոն**



Թեև ես գրում եմ անգլերեն, և չնայած այն փաստին, որ ես Ամերիկայից եմ, ինձ համարում եմ հայ գրող: Բառերը, որ ես օգտագործում եմ, անգլերեն են, շրջապատող իրերը, որոնց մասին ես գրում եմ, ամերիկյան են, բայց հոգին, որը ոգեշնչում է ինձ գրել, հայկական է: Սա նշանակում է՝ ես հայ գրող եմ և խորապես սիրում եմ այն փաստը, որ հայ գրողների ընտանիքի մի մասն եմ կազմում»: – **Վիլյամ Մարոյան**

Արամ Խաչատրյանի երաժշտությունն անմահ է, այն իր մեջ կրում է հայ ազգի ոգին՝ պայքարի և հաղթանակի ոգին: – **Չէ Գևարա**

«Ձեր հնամենի լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն: Դրա մեջ Արևելքն եմ զգում, դարերն եմ նշմարում այնտեղ, տեսնում եմ անցալի խորհրդավոր նշույլի շողարձակումը: Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելը»: – **Վիկտոր Հյուգո**

1915թ. սկիզբ առան այս Սարսափները որոնք իրենց հավասարը չունեն պատմության մեջ: Արդու Համիդի ջարդերը դատարկ բան են թվում ժամանակակից թուրքերի իրականացրած կոտորածի համեմատությամբ: – **Ֆրիտյոֆ Նանսեն**

Հայ ժողովրդի ոչնչացումը մնում է և կմնա որպես ամենամեծ ողբերգություն, որը համայն մարդկության, այդ թվում և Գերմանիայի ամոթն է, քանի որ վերջինս, լինելով օսմանայն Թուրքիայի առանձնաշնորհյալ դաշնակիցը, ոչինչ չի արել մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի կոտորածն արգելելու համար»: – **Լուիս Էյնշտեյն**



Գերմանացի հասարակական գործիչ, հոգևորական (աստվածաբանության դոկտոր), արևելագետ Յոհաննես Լեփսիուսը, դատապարտելով թուրքական իշխանությունների հայաջինջ գործողությունները, իր երկրի կառավարությունից պահանջել է ազդու միջոցներով դադարեցնել հայերի կոտորածները: Նրա երկերը և դիվանը (պատմական փաստաթղթերի ժողովածու) ապացուցում են, որ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում Առաջին աշխարհամարտի (1914-1918 թթ.) ժամանակ կատարվել է Հայոց ցեղասպանություն:



Յոհաննես Լեփսիուսը հայկական դրոշմանիշի վրա

Յոհաննես Լեփսիուսը երկար տարիներ զբաղվել է Հայկական հարցով: 1896 թ. գարնանը՝ արդուլիհամիդյան կոտորածների ժամանակ, Գերմանիայի հասարակական գործիչ, հայազգի Ջեյմս Գրինֆիլդի հետ շրջել է Փոքր Ասիայում՝ ականատեսների վկայություններ հավաքելու և հայերին հնարավոր օգնություն ցույց տալու նպատակով: Նույն թվականի օգոստոսից Լեփսիուսը գերմանական մամուլում հրապարակել է «Ճշմարտությունը Հայաստանի մասին» հոդվածաշարը (18 հոդված), որը դարձել է «Հայաստանը և Եվրոպան...» (1896 թ.) աշխատության հիմքը: Վերջինս 2 տարում հրատարակվել է 7 անգամ և թարգմանվել անգլերեն ու ֆրանսերեն:

Լեփսիուսը մասնակցել է հայերի սպանդի դեմ կազմակերպմանը, իր ելույթներում ընդգծել, որ այդ հանցագործությունը կատարել է թուրքական կառավարությունը՝ սուլթանի գլխավորությամբ: Սակայն նրա հայապաշտպան գործունեությունը հանդիպել է Թուրքիայի հետ մերձեցման ձգտող Գերմանիայի պաշտոնական շրջանակների հակազդեցությանը:

XIX դարի վերջին Լեփսիուսը միջոցներ է հավաքել Փոքր Ասիայի հայ բնակչության և տարբեր երկրներում ապաստանած հայ փախստականների համար որբանոցներ, դպրոցներ, հիվանդանոցներ, արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելու համար: Արևմտահայերին օգնելու նպատակով 1914 թ-ի հունիսին նրա նախաձեռնությամբ ստեղծվել է «Գերմանա-հայկական ընկերություն» հասարակական կազմակերպությունը, որի նախագահն էր մինչև մահը: Առաջին աշխարհամարտի նախօրեին եվրոպական երկրներում գործունեություն է ծավալել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու համար, համագործակցել է Կոստանդնուպոլսի հայերի, **Պողոս Նուբարի** (Պողոս փաշա Նուբարյան) հետ: 1915 թ. հուլիսին՝ հայերի շարունակվող տեղահանության և կոտորածների շրջանում, Լեփսիուսը հանդիպել է երիտթուրքական եռապետության պարագլուխներից և Հայոց ցեղասպանության գլխավոր հանցագործներից Էնվերին, պահանջել դադարեցնել ոճրագործությունը, սակայն ապարդյուն:



1915 թ. հուլիսին՝ հայերի շարունակվող տեղահանության և գրադարանների շրջանում, Լեփսիուսը հանդիպել է երիտթուրքական եռապետության պարագլուխներից և Հայոց ցեղասպանության գլխավոր հանցագործներից Էնվերին, պահանջել դադարեցնել ոճրագործությունը, սակայն ապարդյուն: 1915 թ-ի սեպտեմբերին շվեյցարական թերթում հրապարակել է «Մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը» հոդվածը՝ սկզբնավորելով հայապաշտպան մեծ արշավը: 1916 թվականին հրատարակել է «Տեղեկագիր հայ ժողովրդի կացության մասին Թուրքիայում» երկը, որը բաժանել է Գերմանիայի քաղաքական և եկեղեցական գործիչներին: 1919 թ. այդ գիրքը վերահրատարակել է լրացումներով՝ «Հայ ժողովրդի մահը» վերնագրով (հայերեն՝ «Հայաստանի ջարդերը», 1919 թ.): «Տեղեկագիրը...» հրատարակելուց հետո Լեփսիուսը տարագրվել է չեզոք երկիր՝ Հոլանդիա, որտեղ շարունակել է հայանպաստ գործունեությունը, կապեր հաստատել հայկական շրջանակների, գրագրություն՝ անգլիացի պետական գործիչ Ջեյմս Բրայսի հետ: Մշակել է ի պաշտպանություն հայերի ստեղծվելիք միջազգային լիգայի մանրամասն ծրագիրը: Առաջին աշխարհամարտից հետո Լեփսիուսը հրապարակել է բազմաթիվ կարևոր փաստաթղթեր Հայաստանի վերաբերյալ («Գերմանիան և Հայաստանը 1914–18 թթ-ին», 1919 թ.): Այդ ժողովածուն [Ավետիք Իսահակյանի](#) միջոցով ուղարկել է [Վերսալյան հաշտության խորհրդաժողովին](#) մասնակցող հայկական պատվիրակությանը:





Ժողովածուում ընդգրկված նյութերը՝ Գերմանիայի և Թուրքիայի հյուպատոսների և պաշտոնական այլ անձանց գաղտնի զեկուցագրերը, ականատեսների վկայությունները, հաստատում են, որ երիտթուրքերի կազմակերպած հայերի տեղահանությունն ու կոտորածները նպատակ ունեին ոչնչացնելու հայ ժողովրդին, և այդ հանցագործության մեջ մեղքի իր բաժինն ունի նաև Գերմանիան:

1921 թ. Բեռլինում Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ հանդես է եկել որպես վկա և մերկացրել երիտթուրք ռճրագործ Թայեաթ փաշային: Շարունակել է նյութական օգնություն ցույց տալ հայ որբերին ու փախստականներին, Խորհրդային Հայաստան է ուղարկել Գերմանա-հայկական ընկերության հայթայթած դեղորայքը:





Հանդես է եկել ճնշված ժողովուրդների, մասնավորապես Օսմանյան կայսրության հայերի պաշտպանությամբ: Նախաձեռնել և ոգեշնչել է բազմաթիվ հասարակական միջոցառումներ, որոնց նպատակն էր լայն հասարակությանը տեղեկացնել արևմտահայերի նկատմամբ իրականացվող կամայականությունների, բռնությունների և կրկնվող ջարդերի մասին: Աբդուլ Համիդի կողմից 1894-1896 թվականներին կազմակերպված հայերի զանգվածային կոտորածների ժամանակ բողոքի ձայն է բարձրացրել թուրքական իշխանությունների դեմ, կազմակերպել և անձամբ մասնակցել է հայ որբերի համար հանգանակությանը: Ժան Ժորեսի ու Ֆրեդերիկ դը Պրեսանսեի հետ եղել է Փարիզում հրատարակվող «Պրո Արմենիա» ամսագրի խմբագրության անդամ: 1903-1904 թվականներին ակտիվորեն մասնակցել է եվրոպական տարբեր քաղաքներում կազմակերպվող հայերի և մակեդոնացիների եվրոպական տարբեր քաղաքներում պաշտպանության հանրահավաքների և կոնֆերանսների^[44]:

Ֆրանսը ցատումով բողոքել է հայերի ցեղասպանության դեմ: 1916 թվականի ապրիլի 9-ին Սորբոնում ելույթի ժամանակ նա հայտարարել է. «Երիտթուրքերը, տիրանալով իշխանությանը, իրենց դաժանությամբ գերազանցեցին Աբդուլ Համիդին... Մեզ սիրող այդ ժողովրդին բնաջնջելու որոշումն ընդունվել է թուրքական կառավարության խորհրդակցություններում... Արյան այն փոքր քանակությունը, որը նա դեռևս պահպանում է, թանկագին արյուն է, որից հերոսական սերունդ է ծնունդ առնելու: Ժողովուրդ, որը մեռնել չի ուզում, երբեք չի մեռնի»:

Հենրի Մորգենթաու



ամերիկացի դիվանագետ, ԱՄՆ դեսպանը Օսմանյան կայսրությունում (1913-1916 թթ.), դատապարտել է Հայոց ցեղասպանությունը, դրան անդրադարձել իր հուշերում:

Հանդիսանում է քաղաքագետ կրտսեր Հենրի Մորգենթաուի հայրը: Իր թոռներն են Ռոբերտ Մորգենթաուն (հայտնի իրավաբան) և Բարբարա Թաքմանը (գրող, Պուլիցերյան մրցանակի դափնեկիր):

Հենրի Մորգենթաուն 1865 թվականին ընտանիքի հետ տեղափոխվել է ԱՄՆ, 1877 թվականին ավարտել է Կոլումբիայի իրավաբանական քոլեջը, հետագայում եղել է ԱՄՆ-ի ժողովրդավարական կուսակցության գործուն անդամներից:

Կարիերան սկսել է որպես անշարժ գույքի բրոկեր: Ամուսնացել է 1886 թվականին, ուներ 4 երեխա:

1913–1916 թթ-ին նա ԱՄՆ-ի դեսպանն էր Թուրքիայում, Առաջին աշխարհամարտի (1914–1918 թթ.) սկսվելուց հետո Օսմանյան կայսրությունում ներկայացրել է նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Բելգիայի շահերը:

1915 թվականից Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնու փոխնախագահն էր: Երբ հայտնի է դարձել, որ արևմտահայերի տեղահանության իրական նպատակը նրանց լիակատար բնաջնջումն է, Մորգենթաուն հանդիպել է երիտթուրքերի պարագլուխներ Թալեաթ և Էնվեր փաշաների հետ, փորձել է կասեցնել կոտորածն ու տեղահանությունը: Դիմելով Թալեաթին՝ Մորգենթաուն ասել է. «Մեր ժողովուրդը երբեք չի մոռանա այս ջարդերը»: Իր հուշերում, որոնք գրված են Օսմանյան Թուրքիայում Հալեպի ԱՄՆ հյուպատոսների զեկուցա-գրերի հիման վրա, նա առանձին գլուխներ է նվիրել արևմտահայերի ողբեր-գությանը: 1916 թվականին Մորգենթաուն թողել է դեսպանի պաշտոնը՝ ասելով.


Ես այլևս չէի կարող շարունակել իմ հարաբերություններն այնպիսի մարդկանց հետ, որոնք թեպետ սիրալիր և բարեկիրթ են, բայց կարող են 1 միլիոն մարդու արյուն հեղել: Չարիքն ու բռնությունները չեն կարողացել ընկճել հայ ժողովրդին. ամեն անգամ որևէ տեղից ծագած լույսի նշույն անգամ սնել է ազատության նրա երազանքը:

Ինձ համար դժվար է հավատալ, որ որևէ մեկը կարող է ծանոթանալ հայ ժողովրդի պատմությանը՝ առանց խորապես ցնցվելու նրա մեծ ողբերգությունից:

Հայ ժողովուրդը, հոգատարությամբ պահպանելով իր հին ու ինքնատիպ մշակույթը, հաջողությամբ զարգացնում է այն՝ նրան տալով չտեսնված փայլ:

Անհրաժեշտ է, որ դիմացինի նկատմամբ սիրո և ազնվության զգացումը համակի մեր մտքերն ու արարքները, և մենք միշտ պետք է հիշենք, որ սերն ու համբերությունը անտառի ամենագեղեցիկ ծառերն են:

Մարդկության պատմության մեջ չկա մի բան, որ իր հավասարն ունենա 1915թ. սկսված ջարդերի հետ: Արդու Համիդի ջարդերը չնչին են այսօրվա թուրքերի արածի համեմատությամբ:



Անգլիացի պետական գործիչ: Լիբերալ կուսակցության ղեկավար: 1905-08 թթ. առևտրի, 1908-15 թթ.՝ ֆինանսների նախարար, 1916-22 թթ.՝ պրեմիեր մինիստր: 1919-20 թվականներին [Փարիզի հաշտության կոնֆերանսի](#) և [Վերսալյան պայմանագրերի](#) գլխավոր հեղինակներից: 1919-22 թթ. պաշտպանել է անգլո-հունական պատերազմը թուրքական ազգայնական շարժման դեմ, սակայն, անհաջողություն կրելով, պաշտոնաթող է եղել: 1917—1922 թվականներին Լյոդ Չորջն իր հրապարակային ելույթներում և միջազգային կոնֆերանսներում ([Փարիզ](#), [Լոնդոն](#), [Սան Ռեմո](#)) հանդես է եկել հոգուտ հայկական հարցի դրական լուծման՝ դատապարտելով [Մեծ Բրիտանիայի](#) ավանդական թուրքամետ քաղաքականությունը. «Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-97 և 1909 թվականների սուկայի սպանդին և 1915 թվականի զարհուրելի կոտորածին»: Անտանտի երկրներին հորդորել է կատարել իրենց խոստումները «Փոքրիկ դաշնակցի» հանդեպ՝ ապահովելով նրա անկախությունը: Բայց, լինելով իրապաշտ քաղաքագետ, հետպատերազմյան խաղաղության հարցերում գործարքի մեջ է մտել քեմալական [Թուրքիայի](#) հետ՝ [հայկական հարցը](#) զոհաբերել բրիտանական կայսրության շահերին:




նորվեգացի բևեռախույզ, գիտնական, դիվանագետ և ականավոր հուլմանիստ:
Ֆրիայոֆ Նանսենը ծնվել է Քրիստիանայում 1861 թվականին փաստաբանի ընտանիքում:
Երիտասարդ տարիքում եղել է չմշկորդ, զբաղվել է լողով, դահուկավազքով և նկարչությամբ:
Արդեն 20 տարեկանում նա մասնակցել է չորս ամիս տևողությամբ ճանապարհորդություն ողջ
Հյուսիսային սառուցյալ օվկիանոսով: 1888 թվականին նա գլխավորել է այն թիմը, որն առաջին
անգամ ամբողջությամբ հատել է Գրենլանդիան: Նանսենը միջազգային ճանաչում է ստացել,
երբ հատել է ռեկորդային հյուսիսային լայնության՝ $86^{\circ}14'$, Հյուսիսային բևեռում
արշավի ժամանակ (1893-1896): Նանսենը ուսումնասիրել
է կենդանաբանություն Քրիստիանայի համալսարանում, ավելի ուշ աշխատել է Բերգենի
թանգարանում, որտեղ հետազոտել է ջրային օրգանիզմների կենտրոնական նյարդային
համակարգը: Այդ հետազոտություններից հետո նա արժանացել է գիտությունների թեկնածու
կոչմանը: 1896 թվականից հետո Նանսենը իր հետաքրքրությունը փոխեց
օվկիանոսագիտությանը: Այս գիտության մեջ նա կատարել է մեծ քանակությամբ
հետազոտություններ, գլխավորը հյուսիսային Ատլանտիկայում: Նրա ներդրումը շատ մեծ է
նաև օվկիանոսագիտության սարքավորումների մեջ: Որպես իր ազգի
առաջնորդ՝ 1905 թվականին բարձրաձայնեց Շվեդիայի հետ միացությունը խզելու հարցը:




Նանսենը Դանիայի Քարլ Արքայագնին խնդրել է դառնալ նրա ազատագրված Նորվեգիայի արքա: 1906-1908 թվականներին նա եղել է Նորվեգիայի ներկայացուցիչը Լոնդոնում, որտեղ նա օգնեց կնքել պայմանագիր, որով Նորվեգիան պաշտոնապես դարձավ անկախ պետություն: 1921 թվականին Ազգերի լիգայում փախստականների հարցով գլխավոր լիագորի պաշտոնը ստանձնելուց հետո Նանսենը կյանքի վերջին տասնամյակը նվիրում է Ազգերի լիգային: 1922 թվականին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իր մեծ օգնությունների համար պարգևատրվում է Խաղաղության Նորելյան մրցանակով: Այդ օգնությունների թվում են նաև «Նանսենյան անձնագիրը» քաղաքացիություն չունեցող անձանց համար: Փաստաթուղթը գործում էր ավելի քան 50 երկրներում: Պաշտպանել է հայ ժողովրդի ոտնահարված իրավունքները, հայ գաղթականներին հատկացրել է Նանսենյան անձնագրեր: Նա մինչև իր մահը զբաղվել է փախստականների հարցով, որից հետո Լիգան ստեղծել է Նանսենի միջազգային ակադեմիան Լիլեհամերում և շարունակել է Նանսենի գործունեությունը: 1938 թվականին կազմակերպությունը պարգևատրվել է Նորելյան մրցանակով:





Ֆրանսիացի սոցիալիստ գործիչ, «Յունանիտե» թերթի հիմնադիր: Իր հրատարակություններում, հոդվածներում և ելույթներում բազմիցս բողոքել է Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում հայերի նկատմամբ սուլթանական կառավարության բիրտ կամայականությունների և դաժանությունների դեմ:

1903 թվականի փետրվարին Փարիզում արտասանած ճառում Ժորեսը քննադատել է 1894-96-ի արդուլիհամիդյան ջարդերի ժամանակ եվրոպական տերությունների դիրքորոշումը հայկական հարցում. «Եկել է ժամանակը, որպեսզի Եվրոպայի հասարակական կարծիքը վերջապես շարժվի մեռյալ կետից... Յոթ տարի առաջ Հայկական հարցում մեծ տերությունների բռնած դիրքի համար և մենք, և Եվրոպան ներկայումս հատուցում ենք այն դժվարություններով, որոնցով հղի է մակեդոնական հարցը: Այս երկարաձգված անտարբերությունը, այս երկար անհրազեկությունը, հիրավի դարձան մեծագույն հանցագործություն, որը սրբեց հրեշավոր սպանությունների հետքերը... Եթե Եվրոպայի այդ լռելյայն ու պասսիվ կարեկցանքը մեծ հանցագործություն էր, այն միաժամանակ նաև մեծ սխալ էր... Հայաստանի հանդեպ մեր վարվելակերպը սրանից յոթ տարի առաջ խրախուսեց սուլթանին և այն հանցագործություններն ու անօրինականությունները, որոնք միշտ էլ խռովություններ են հարուցում»^[5]: Ժորեսն արձագանքել է Կիլիկիայի 1909 թվականի ապրիլյան դեպքերին և, նկատի ունենալով երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեին, «Յունանիտեում» (1909, ապրիլի 4) գրել է. «Լիբերալները ներգրավվել են հետադիմության բանասարկությունների մեջ, և հայերը կոտորվեցին, ինչպես կարմիր սուլթանի լավագույն օրերին»:



Վալերի Բրյուսով



Հայոց ՄԵԾ ԵՂԵՌՆԻ արտացոլումը Վալերի Բրյուսովի գործերում:

Վալերի Բրյուսովը հայ ժողովրդի պատմությունն ու պոեզիան ուսումնա-սիրելիս գրել է Հայաստանին նվիրված մի շարք ոգեշունչ բանաստեղծութ-յուններ: Ոգեկոչող խոսքերով դիմելով հայ ժողովրդին՝ նա հավատով լեցուն գրում է, որ հայերին հատուկ է անկոտրում ոգի, պայքարի կամք և անսպառ կենսունակություն: Առաջին իսկ՝ «Հայաստանին» (1915) ստեղծագործության մեջ Վ. Բրյուսովը խոստովանում է, որ Հայաստանը մի երկիր է, որտեղ «շիրիմ» է որոնել, բայց՝

... Լոկ աշխարհ գտա միշտ ստեղծարար.

Զնգացին բացվող օրվա պես պայծառ

Հին-հին օրերի սրինգները վես,

Եվ մահվան դաշտը դարձավ ծաղկավառ:

Այդ ձայնն էր ո՛չ թե մեռած, հի՛ն ասքի,

Այլ անմահ սիրո՛ լի ողջույնով ժիր.

Եվ դաշտերը մի որոտմունքով զիլ

Կոչ հղեցին ինձ խոր ու սրտագին,

Եվ կոչն այդ ահեղ ավետեց, – ապրի՛ր...



... Հայաստան, այսօր ճայնրդ հնուցվան
Թարմաշունչ հով է – ամառվա տոթին.
Եվ այնքան շարժուն, և կայտան այնքան,
Որ այդ, անձրևից թեք հասկի նման,
Ուղղում եմ ահա ես ինձ վերստին:

Հայ ժողովրդի ապագայի նկատմամբ մեծ հավատով է տոգորված «Հայերին»
(1916) բանաստեղծությունը: Հեղինակը պատմում է Հայաստանի անցյալի մասին,
թե ինչպես հայ ժողովուրդը դիմակայեց աշխարհի «Հազար հողմեր մահահնչուն»
երբեք չկորցնելով հույսը, մնաց և պահեց իր սրբությունները և այժմ թափառող
ցեղերի ամբոխի մեջ Հայաստանը հպարտորեն կրում է իր «բազմադարյան պսակը»:
Բանաստեղծը վստահ է, որ`
Տիգրանի ազգը հաղթական
Հողմից, մութից դուրս կգա հար, –
Հանուն սիրո անապական
Ու սիրանքի նոր ու պայծառ, –
և կվերածնվի նոր կյանքի համար:



Եզրակացություն

Թվում էր թե 21-րդ դարում մենք հեռու էինք ցեղասպանության վտանգից, քանի որ ապրում ենք «Քաղաքակիրթ աշխարհում»: Սակայն 44-օրյա պատերազմը ապացուցեց հակառակը. Յուրաքանչյուր տերություն հետամուտ լինելով իր շահերին գործնական ոչ մի քայլ չձեռնարկեց ադրբեջանական ագրեսիան կանխելու համար: Չնայած եղան դատապարտող կոչեր, որոնք միայն խոսք էին, այլ ոչ թե գործ:

ԱՄՆ կոնգրեսական Դեյվիդ Չիսիլին նշում է «Ադրբեջանի հարձակումը Հայաստանի արևելյան սահմանի վրա խաղաղության ակնհայտ խախտում է և անընդունելի է: Ադրբեջանը պետք է ընդունի և հարգի Հայաստանի ինքնիշխանությունը»:

Ադրբեջանի գործողությունները դատապարտել են կոնգրեսի ներկայացուցիչների պալատի հետախուզության հարցերով հանձնաժողովի նախագահ՝ Ադամ Շիֆը, սենատոր՝ Ջեք Ռիդը, Եվրախորհրդարանում Հարավային Կովկասի պատվիրակության ղեկավար Մարինա Կայուրանդը, Վլադիմիր Սոլովյովը և ուրիշներ:

Այսպիսով ևս մեկ անգամ նշենք, որ մշտական բարեկամներ չկան, կան շահերի բարեկամներ...

